ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2019թ. թիվ 337-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ Մ.ԹԱՆԴԻԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Մ.Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 25.03.2019թ., ծնողական խորհրդի նախագահի 27.03.2019թ. և Ալավերդի համայնքի ղեկավարի 15.03.2019թ. թիվ 513 գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Մ. Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Բեժանյան Լուսինե» բառերը փոխարինել «Սիմոնյան Սերինե» բառերով, «Դալլաքյան Մարգուշ» բառերը՝ «Մոսինյան Ոսկեհատ» բառերով, «Էվոյան Անուշ» բառերը՝ «Բարսեղյան Անահիտ» բառերով և «Ճուղուրյան Տաթև» բառերը՝ «Իսրայելյան Սվետլանա» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Լարիսա Թամազյանի, Անահիտ Մաժինյանի և համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Հովիկ Շալաղոյանի թեկնածությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մայիսի 10
ք.Վանաձոր